

## Կարծիք

Մերի Ռաֆիկի Թադևոսյանի «Ժամանակակից տեղեկատվական հոսքերը Հայաստանի ՋԼՄ-ներում. մեդիատիրույթի վերափոխման առանձնահատկությունները» թեկնածուական ատենախոսության մասին

Հաղորդակցության և գլոբալ զարգացումների ներկա պայմաններում մեդիատիրույթը շարունակում է փոփոխությունների ենթարկվել, և այս համատեքստում առանձնակի կարևորություն են ստանում տեղեկատվական հոսքերի ձևավորմանը, նրանցում տեղի ունեցող համակարգային վերափոխումներին, ժանրային ու ձևաչափային նոր զարգացումներին առնչվող խնդիրները: Ուստի Մերի Թադևոսյանի ատենախոսության արդիական հնչեղությունը կասկած չի հարուցում, հատկապես եթե նշենք, որ հայաստանյան մեդիադաշտում համարյա թե չկան հիշյալ թեմայով կատարված լուրջ հետազոտություններ:

Այս ծավալուն ատենախոսությունը (207 էջ՝ գրականության ցանկի, հավելվածի հետ միասին) երկու հիմնարար ուղղություն ունի, որոնք հեղինակն ամփոփել է երկու գլխի մեջ՝ համապատասխան ենթագլուխներով: Նախ՝ հստակեցվում է «տեղեկատվական հոսք» եզրույթի հայեցակարգային ապարատը և ապա՝ ժամանակակից մեդիատիրույթի հարացույցում հետազոտվում՝ այդ հոսքերի կայացման, վերափոխման, նաև ժանրային ու ձևաչափային փոխակերպումների ընթացքն ընդհանրապես և հայաստանյան տեղեկատվական տիրույթում մասնավորապես:

Առաջին գլխում («Տեղեկատվական հոսքերը և դրանց զարգացման միտումները») հեղինակի ինքնուրույն մոտեցումն ի հայտ է գալիս «տեղեկատվական հոսքեր, լրագրություն, ՋԼՄ-ներ, ՋԼՄ-ներ» մեդիահասկացությունների համեմատական քննության շրջանակներում: Հիշյալ եզրույթներից յուրաքանչյուրի շուրջ նրա դիտարկումները փաստարկված են: Մ. Թադևոսյանն իրավացիորեն նշում է, որ սրանցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ գործառույթները, քանի որ բովանդակային ու ծավալային առումով դրանց տարանջատումներն ակնհայտ են, ուստի վերջիններին փոխառնչությունները ոչ թե «հոնանիշային» են, այլ

«փոխկախված» (ատենախոսի բնութագրումներն են), փոխլրացնող, և այդ հարաբերակցության շրջանակներում պետք է ուսումնասիրել դրանք:

Երկրորդ ենթագլխում ատենախոսը քննում է զլոբալ զարգացումների պայմաններում տեղեկատվական հոսքերի դրսևորման ձևերը և եզրակացնում, որ 21-րդ դարին բնորոշ դինամիկ զարգացումները նոր երանգներ են հաղորդել տեղեկատվական հոսքերի կայացման ու կազմակերպման ներքին տեղաշարժերին: Այս համատեքստում ևս փաստարկները բերվում են պատշաճ հիմնավորումներով:

Ատենախոսության երկրորդ գլխում («Ժամանակակից մեդիատիքային և տեղեկատվական հոսքերի համակարգերի փոխակերպումը տեղեկատվական և տեխնոլոգիական առաջընթացի դարաշրջանում») հեղինակի տեսադաշտում տեղեկատվական հոսքերի փոխակերպման հիմնական ուղղություններն ու միտումներն են: Փորձ է արվում ներկայացնել, թե թվային տեխնոլոգիաների դարում ի հայտ եկած մարտահրավերները, մասնավորապես՝ կրավորական լսարանի փոխարեն ակտիվ օգտատերերի առկայությունը, համացանցային կոնտենտի ահռելի ծավալը, մուտքի մատչելիությունը, հիպերտեքստային հղումներն ու դրանց կիրառման ճկունությունը և այլն, ինչպես են ազդել տեղեկատվական հոսքերի կառուցվածքի վրա: Այս համատեքստում կարելի է առանձնացնել դասական ԶԼՄ-ների վերադիրքավորման շուրջ հեղինակի դիտարկումները: Նման վերադիրքավորմամբ ի հայտ եկած նոր փոփոխությունները ատենախոսը համարում է բնական գործընթաց և իրավացիորեն նկատում, որ նոր տեխնոլոգիաների ճիշտ կիրառմամբ ԶԼՄ-ները կարող են պահպանել իրենց առաջատար դերը արդեն իսկ անհատականացվող լսարանին և նրա առաջադրած նոր պահանջներին համարժեքորեն արձագանքելու դեպքում:

Մերի Թադևոսյանի վերլուծությունները փաստարկված են նաև ատենախոսության այն հատվածներում, որտեղ խոսք է գնում տեղեկատվական հոսքերի և լրագրողների աշխատանքային փոփոխությունների, ըստ այդմ՝ լրագրության ժանրային ու ձևաչափային փոխակերպումների մասին: Համամիտ ենք այն դիտարկմանը, որ մեդիադաշտի ներկա համապատկերում «նոր ձևաչափերի և ժանրերի ստեղծումը ինքնարտահայտման հնարավորություն է, [...] տեղեկատվական հոսքում սեփական «դեմքի» որոնում» (էջ 122), ինչը մեկ անգամ ևս հավաստում է, որ «ժանր»

հասկացությունը այժմ նույնպես չի կորցրել իր կենսունակությունը: Երկրորդ գլխում տեղեկատվական հոսքերի փոխակերպման գործընթացը ներկայացնելիս աստենախոսը հարկ եղած դեպքում փորձում է ընդհանրական բնութագրումները վկայակոչել նաև հայաստանյան մեդիայից մեջբերված օրինակներով:

Բուն հայաստանյան տեղեկատվական հոսքերին հանգամանալից անդրադարձ է կատարված երկրորդ գլխի վերջին ենթագլխում: Գնահատելի է հեղինակի քննական մոտեցման ձևը. ուսումնասիրության առարկա բովանդակային տվյալները նա ի մի է բերել՝ առանձնացնելով հայաստանյան մեդիադաշտի հիմնական հարթակները (հեռուստատեսություն, ռադիո, տպագիր և առցանց մամուլ, սոցցանցեր), նշել դրանց մեջ առավել ակտիվների գործունեության իմաստային ու թեմատիկ ուղղվածությունները: Հետազոտական առումով ուշագրավ են նաև աստենախոսի առանձնացրած և հայաստանյան տեղեկատվական հոսքերին բնորոշ հինգ հիմնական բնութագրումները: Դրանցից առնվազն երկուսը, այն է՝ տեղեկատվական հոսքերի բազմադիմությունը (առաջին կետ), համացանցի ու հեռուստատեսության՝ որպես տեղեկատվության հիմնական աղբյուր լինելու իրողությունը (երկրորդ կետ), կարծում ենք, բնորոշ են ոչ միայն հայաստանյան մեդիատիրույթին: Մեզ առնչվողը թերևս երրորդ և չորրորդ կետերն են, որոնցում հեղինակը մատնանշում է հայ օգտատերերի մեծամասնության ոչ ակտիվ լինելը և թեմատիկ այն առաջնահերթությունները, որոնք նույնպես պայմանավորված են ազգային կյանքում տեղի ունեցած իրադարձություններով:

«Եզրակացություն» բաժնում ի մի են բերվել կատարված աշխատանքի հիմնական արդյունքները, արվել հայեցակարգային առաջարկներ, որոնք բխում են տեղեկատվական քաղաքականության ու տեղեկատվական անվտանգության ոլորտներում մեր ազգային առաջնահերթություններից:

Վերջում՝ մի քանի խոսք աշխատանքում նկատված թերացումների մասին:

1. Քանի որ աստենախոսը հստակ պատկերացում ունի տեղեկատվական հոսքերի համակարգային փոխակերպումների և դրանց առնչվող խնդիրների մասին, թերևս ճիշտ կլիներ, որ նրա ուսումնասիրությունն ընդգրկեր հայաստանյան մեդիատիրույթը գոնե վերջին հինգ տարվա կտրվածքով՝ ներառելով ոչ միայն հետհեղափոխական (2018-2021թթ.), ինչն առկա է աշխատանքում, այլև

մինչհեղափոխական շրջանը, որի շնորհիվ ավելի ամբողջական կներկայացվեին ազգային մեղիադաշտի ներքին պատկերն ու հայկական տեղեկատվական հոսքերի զարգացման ընթացքը:

2. Աշխատանքի որոշ հատվածներ (տե՛ս, մասնավորապես, երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը) ուղեցույցի տպավորություն են թողնում, որոնցում հեղինակը պարզապես նկարագրում-շարադրում է տեղեկատվական հոսքերին առնչվող մի շարք տեխնոլոգիաներ, տվյալների բազաներ և այլն: Ճանաչողական այս տեղեկատվությունը թուլացնում է նյութի վերլուծական կողմը:

3. Ատենախոսության որոշ էջերում ակնհայտ են ասելիքի ոչ հստակ ձևակերպումներ. այդպիսիք են, օրինակ, սիներգետիկ պարադիգմին առնչվող շարադրանքը (էջ 47-48), «ձևաչափ» հասկացությանը նվիրված երկար, տեղ-տեղ խճողված բացատրությունները (էջ 118-122) և էլի մի շարք հատվածներ:

Նշված թերությունները, ինչ խոսք, չեն ստվերում այն մեծածավալ աշխատանքը, որ կատարել է ատենախոսը՝ համակողմանիորեն ներկայացնելով տեղեկատվական հոսքերի փոխակերպումները, դրանց դրսևորման բնութագրական կողմերը ժամանակակից մեղիայի և մասնավորապես հայաստանյան լրատվամիջոցների համապատկերում: Ուստի միջնորդում եմ 012 մասնագիտական խորհրդին՝ Մերի Ռաֆիկի Թաղևոսյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Դավիթ Պետրոսյան

Բանաս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



30. 06. 2021 թ.

Դ. Պետրոսյանի ապագա թեկնածուի կապակցած ԾՊԿ թղթակալ խորհրդի անդամ Կ. Կոնստանտինով

